280=

ՓՈԽԱԴԱՐՁ ՈՎՆՈՒԹՅԱՆ
ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ

ՆՈՐՄԱԼ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐԵՎԱՆ 1926

ՀՐԱՏԱՐԱԿ. ՀԱՄԽ-Ի № 53

27/I 27р
339.7

ՓՈԽԱԴԱՐՁ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ

ՆՈՐՄԱԼ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՑԵՐԵՎԱՆ 1926

ՀՐԱՏԱՐԱԿ. ՀԱՄԽ-Ի № 53

ՀԱՅՊԵՏՊՈԼԻԳՐԱՖԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 862
ԳՐԱՌ 867 Բ. ՏԻՐԱԺ 1000

842-ԱԳԴ

ՓՈԽԱԳԱՐՁ ՈՂՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՆՈՐՄԱԼ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԱՆԵԼԻՔԸ

1. Փոխադարձ ողնության դրամարկղը վարձու աշխատանքով զբաղվող անձանց կամավոր կազմակերպություն է, որը իրեն նպատակ է դնում նյութական ընկերական ողնություն հասցնել իր կարիքավոր անդամներին, տալով նրանց փոխատվություններ և անվերադարձ նպաստներ: Փոխադարձ ողնության դրամարկղն իր աշխատանքը վարում է Արհմիության համապատասխան որդանի ընդհանուր ղեկավարության և կազմակերպչական ղեկավարությամբ:

Բ. ԴՐԱՄԱՐԿՂԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ

Փոխադարձ ապահովության դրամարկղերները կազմակերպվում են բացառապես կամավոր և անհատական անդամակցության հիմունքներով։ Դրամարկղերները կարող են կազմակերպվել այն դեպքում, եթե կլինեն 25-ից վոչ պակաս դիմողներ։

ԾԱՆՈԹՈՒԹ.—Մի հիմնարկության կամ ձեռնարկության մեջ չի կարող մի դրամարկղից ավելի լինել։

3. Մանր ձեռնարկությունների մեջ աշխատողները և մենակները, համապատասխան միությունական որպանի հաստատմամբ, կարող են միանալ իրենց մոտակա ձեռնարկությունների դրամարկղներին կամ պրոֆմիության կից կազմակերպված դրամարկղին։

4. Շրջաններում, ամառներում և գյուղերում առհմանված թվով դիմողներ չեղած դեպքում՝ կազմակերպվում են փոխադնության դրամարկղներ ինչ-

պես մի քանի ձեռնարկությունների և հիմնարկությունների (միջմիութենական), նույնպես և առանձին ձեռնարկությունների և հիմնարկությունների համար:

5. Փոխադարձ ոգնության դրամարկղի պաշտոնական գոյությունը համարվում և այն մոմենտից, երբ տոմարագրվում են՝ դրամարկղի կանոնադրությունը միությունում, իսկ միջմիութենական դրամարկղինը՝ գործարհրյուրոյում:

6. Փոխոգնության դրամարկղն ոգտվում և իրավական անձի իրավունքներով՝ ստացն կանոնադրության դրամարկղի համար թույլատրված ֆունկցիաների սահմաններում և կարող և բոլոր օրինական միջոցներով ձեռք բերել և տնտեսացնել գույքեր, կնքել պայմանագրեր, վերցնել իր վրա պարտավորություններ, հայց հարուցել, պատասխանել դատարանում և այլն:

7. Փոխադարձ ոգնության դրա-

մարկդն ունի իր անվանական չափամն ու կնիքը և անդամատոմսեր՝ իր անդամների համար:

8. Իր վրա վերցրած պարտավորությունների և ընդհանրապես իր պատճառած վնասների համար ՓՈԴ-ը պատասխանատու չէ իր ամբողջ ստացված քով և դրամագլխով, ի բաց առյայն մի միջոցները, որոնք հիշված են սույն կանոնադրության 29-րդ հոդվածում:

Դրամարկղի անդամները, բացի իրենց մուտքի և անդամական վճարներից՝ ՓՈԴ-ի պարտքերի համար վոչ մի լրացուցիչ պատասխանատվություն չեն կրում:

Գ. ԴՐԱՄԱՐԿՂԻ ԿԱԶՄԸ

9. Դրամարկղին մասնակցողները կարող են լինել տվյալ ձեռնարկության (հիմնարկության) կամ ձեռնարկությունների տվյալ խմբական միավորման մեջ աշխատող բանվորներն ու ծա-

ռայողները, վորոնք պրոֆմիությանն անդամ են կամ իրավունք ունեն անդամ լինելու:

10. Դրամարկղի աշխատակցուկ անդամները մնում են իրենց դրամարկղի անդամ, պահպանելով անդամությունից բղխող բոլոր իրավունքները և պարտավորությունները, մինչև մի այլ դրամարկղի հիմնարկության կամ ձևնարկության մեջ գործի մտնելը:

ԾԱՆՈԹՈՒԹ.—Այն գործակցուկները, վորոնք ՓՈԴ-ի անդամ չեն, իրենց գործակցության ընթացքում դրամարկղի անդամ լինել չեն կարող:

11. Դրամարկղի անդամ լինել ցանկացողը դիմում և տալիս այդ մասին դրամարկղի վարչության, վորը վորոշում և կայացնում նրա ընդունելության մասին: Նոր ընդունվածն անդամ և համարվում մուտքի վճարը մուծելու որից:

12. Դրամարկղից դուրս մնալը տեղի յե ունենում՝

ա) դրամարկղի անդամի անձնական ցանկությամբ և

բ) հետևյալ դեպքերում.—յուրաքանչյուր անդամը յուրաքանչյուր ամսվա ընթացքում անդամավճար չի մուծում, իսկ գործակալը՝ այդքան ժամանակամիջոցում առանց հարգելի պատճառի հայտի չի ներկայանում,

գ) յուրաքանչյուր մի ուրիշ դրամարկղի գործունեության շրջանում զանվող այլ ձեռնարկության մեջ աշխատանքի չի անցնում:

ԾԱՆՈԹՈՒԹ.—ա) Դրամարկղի անդամի դրամարկղից մեխանիկաբար դուրս մնալու ճանաչումը կատարվում է դրամարկղի վարչության որոշմամբ:

բ) Անձնական ցանկությամբ և անդամական վճարներ չմուծելու պատճառով մեխանիկորեն հեռացածները կարող են վերընդունվել ընդհանուր հիմունքներով:

13. Դրամարկղի կարգից հեռացումները կատարվում են դրամարկղի վարչության որոշմամբ, որն անհրաժեշտության դեպքում և հաստատված լինի դրա-

մարկղի անդամների ընդհանուր ժողովում (կոնֆերանսում)։

Հետայսմբ կատարվում է հետևյալ դեպքերում՝

ա) յերբ անդամը սիստեմատիկ կերպով դրամարկղի կանոնադրությունը խախտում է։ Այս դեպքում հետայսմբ կարող է կատարվել 6 ամսից վոչ ավելի ժամանակամիջոցով,

բ) դատական կարգով հատատամված այն արատավորող արարքների համար, վորոնց հետևում է իրավունքների սահմանափակում—դատավճռով սահմանված ժամանակամիջոցի չափով։

Դ. ԴՐԱՄԱՐԿՂԻ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ

14. Դրամարկղների մարմիններն են՝ դրամարկղի անդամների ընդհանուր ժողովը կամ կոնֆերանսը, դրամարկղի խորհուրդն ու վարչությունը։

ԾԱՆՈԹՈՒԹ.— Այն ձեռնարկություններում, և հիմնարկություններում, վորոնք 250-ից ավելի դրամարկղի անդամ ունեն, ընդհանուր ժողովը կարելի յե փոխա-

բինել կոնֆերենցիայով, որի պատգամավորներն ամեն անգամ ընտրվում են դրամարկղի մասնակիցների կողմից՝ ըստ ցեխերի և բաժանմունքների, 3—10 անդամներից մի ներկայացուցիչ տալու նորմայով։

15. Ընդհանուր ժողովները (կոնֆերանսները) լինում են հերթական և արտակարգ։ Հերթական ընդհանուր ժողովները (կոնֆերանսները) հրավիրվում են դրամարկղի վարչության կողմից՝ առնվազը 3 ամիսը մեկ անգամ։ Արտակարգ ժողովները հրավիրում է դրամարկղի վարչությունը իր ձեռնարկությամբ, դրամարկղի վերաուղիչ հանձնաժողովի, Արհմիության համապատասխան որգանի, դրամարկղի խորհրդի առաջարկությամբ և դրամարկղի մասնակիցների առնվազն $^1/_4$-ի պահանջմամբ։ Ընդհանուր ժողովը (կոնֆերանսը) բացում է դրամարկղի վարչության նախագահը կամ նրան փոխարինող վարչության անդամը, որից հետո ժողովը (կոնֆերան-

սը) իր նիստը ղեկավարելու համար ընտրում և նախագահություն:

ԾԱՆՈԹՈՒԹ.—Աբոնակարգ ժողովը (կոնֆերանսը) պետք է գումարվի 2 շաբաթից վոչ ուշ այն որից, յերբ 15-րդ կետի մեջ հիշատակված որգաններից մեկն ու մեկն այդ առիթով առաջարկություն և մատնում դրամարկղի վարչությունը:

16. Ընդհանուր ժողովը (կոնֆերանսը)՝

ա) քննում, հաստատում և փոփոխում և դրամարկղի կանոնադրությունը,

բ) սահմանում և դրամարկղի պաշտոնական անձանց լիազորությունների սահմանները,

գ) ընտրում և դրամարկղի խորհուրդ, վարչություն և վերստուգիչ հանձնաժողով,

դ) քննում և հաստատում և դրամարկղի խորհրդի, վարչության և վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունները,

յե) քննում և հաստատում է դրամարկղի յելքի և մուտքի նախահաշիվները,

զ) սահմանում և փոփոխում է դրամարկղի անդամների մուծումների չափը,

է) սահմանում և հաստատում է նպատակներ և փոխատվություններ տալու կարգն ու նպատակները,

ը) սահմանում է պահեստի ֆոնդի ծախսման կարգը,

թ) սահմանում է դրամարկղի միջոցները լրացնելու յեղանակը,

ժ) քննում է դրամարկղի խորհրդի և վարչության գործողություններին վերաբերող բողոքները,

ժա) հաստատում է դրամարկղի անդամությունից հեռացումները,

ժբ) դրամարկղի լիկվիդացիայի դեպքում փոխում է նրա միջոցների հատկացման նպատակը,

ժգ) քննություն է անում դրամարկղի գործունեության վերաբերյալ

բոլոր հարցերը, բան իր հայեցողության:

17. Ընդհանուր ժողովն իրավասու և համարվում, յերբ ներկա յե ժողովին անդամների վոչ պակաս, քան $^1/_2$-ը, իսկ կոնֆերանսը՝ յերբ ներկա յե պատգամավորների վոչ պակաս, քան $^2/_3$-ը:

ԾԱՆՈԹՈՒԹ. Այն դեպքում, յերբ 1-ին ժողովին (կոնֆերանսին) չեն ներկայանում պահանջված թվով անդամներ (պատգամավորներ), 2-րդ ժողովը (կոնֆերանսը) նույն սրակարգով հրավիրվում և 3 որից վոչ շուտ և իրավասու և համարվում անկախ ներկա յեղողների թվից:

18. Ընդհանուր ժողովների միջանկյալ ժամանակամիջոցում վարչության աշխատանքների գեկավարությունը դրվում և դրամարկղի խորհրդի վրա, վորն ընտրվում և մեկ տարի ժամանակով՝ 5—25 հոգու կազմով: Դրամարկղի խորհրդի նիստերը գումարվում են ամիսը մեկ անգամից վոչ պակաս: Դրամարկղի խորհուրդն ընտրում

և իրեն կազմից խորհրդի նախագահ և քարտուղար։ Դրամարկղի վարչության և վերատուգիչ հանձնաժողովի անդամները խորհրդի նիստերում ազատում են խորհրդակցական ձայնի իրավունքով։

ԾԱՆՈԹՈՒԹ. Խորհուրդները կարող են կազմվել յեթը դրամարկղի մասնակիցների թիվը հասնում է 100-ի։

19. Դրամարկղի խորհրդի գործունեությունները են՝

ա) գնահատել դրամարկղի վարչության ընդհանուր գործունեությունը՝ մի ընդհանուր ժողովից մինչև մյուսը,

բ) նախապատրաստել ու մշակել ընդհանուր ժողով մտցվող հարցերը,

գ) Մշակել ՓՈԴ-երի գործունեության վերաբերող գործնական միջոցներ՝ ընդհանուր ժողովի (կոնֆերանսի) վարչման հիման վրա և իր նախաձեռնությամբ,

դ) սաուգել վարչության աշխատանքները և հարկ յեղած դեպքում խափանել վարչության վորոշումները,

յե) քննել վարչության գործողու-

թյուններին վերաբերող բողոքները,

գ) հրավիրել դրամարկղի անդամներին ընդհանուր ժողովների:

20. Դրամարկղի խորհրդի անդամների պարտականությունների մեջ է մտնում՝

ա) ընդունել դրամարկղի անդամներից դիմումներ՝ ողնություն ցույց տալու համար և տալ յեզրակացություններ այդ դիմումների առթիվ,

բ) դրամարկղի վարչության առաջարկով սուղել դիմումների մեջ ողնության վերաբերվող ցույց տրված փաստերը,

գ) ձեռք առնել միջոցներ դրամարկղից վերցված նպաստները վերադարձնելու համար,

դ) դրամարկղի մարմինների վորոշումները անցկացնել ցեխերում (բաժիններում) և դրամարկղի մասնակցողներին տեղյակ պահել այդ վորոշումների մասին,

ե) ժողովրդականացնել ՓՈԴ-երի

աշխատանքները և դրամել դրամարկղի նոր անդամներ։

21. Դրամարկղի վարչությունն ընտրվում է մեկ տարով, դրամարկղի անդամների ընդհանուր ժողովում (կոնֆերանսում)՝ 3—9 անդամի և 2—3 փոխ-անդամի կազմով։ Դրամարկղի խորհրդի և վարչության վերընտրությունները, մինչև նրանց լիազորության ժամկետը լրանալը, կատարվում է դրամարկղի ընդհանուր ժողովի (կոնֆերանսի) վորոշմամբ։

22. Դրամարկղի վարչությունն ընտրում է իր կազմից նախագահ, քարտուղար, գանձապահ և բաժանում է վարչության մնացած անդամների մեջ առանձին պարտականություններ։ Վարչության նիստերը գումարվում են ըստ կարիքի, սակայն վոչ պակաս, քան չորսթը մեկ անգամ։

23. Դրամարկղի վարչության պարտականությունները են՝

ա) քննել դրամարկղի անդամ ընդ-

դունելու համար տրված դիմումները,

բ) քննել ոգնություն ցույց տալու համար տրված դիմումները,

գ) նախապես մշակել դրամարկղի ընդհանուր ժողովի (կոնֆերանսի) և խորհրդի քննության մատչելիք հարցերը,

դ) հաշվի առնել դրամարկղի անդամների քանակը և կանոնավոր դրամարկղի գործունեություն ու հաշվետվություն,

ե) հսկել, որ իր ժամանակին և կանոնավոր կերպով մուծվեն մուտքի ու անդամական վճարները և տրված փոխառությունները,

զ) ներկայացուցիչ հանդիսանալ (առանց դրա համար հատուկ լիազորության) դրամարկղի գործերում բոլոր հիմնարկություններում, ձեռնարկություններում և կազմակերպություններում,

է) դրամական գործերը վարելու

համար հանդես գալ անձամբ կամ դրա համար տալ հավատարմագրեր,

ը) ինքել պայմանագրեր, տալ դրամական պարտավորություններ, առանձնապես դրամարկղին հասանելիք միջոցներն ու արժեքները, ձեռք բերել ու ուսումնասիրել գույքեր և այլն,

թ) կազմել դրամարկղի գործունեության մասին հաշվեմատյաններ,

ժ) ներկայացնել միությանը դրամարկղի աշխատանքների մասին տեղեկություններ,

ժա) հեռացնել դրամարկղի անդամին անդամությունից՝ ընդհանուր ժողովի կամ կոնֆերանսի հատատումով (հեռացումները ուժի մեջ են մտնում միայն ընդհանուր ժողովի (կոնֆերանսի) հատատումից հետո),

ժբ) իրականացնել ընդհանուր ժողովների (կոնֆերանսի) և դրամարկղի խորհրդի բոլոր վարչումները։

24. Մոշոր ձեռնարկություններին կամ մի քանի միացած ձեռնարկու-

թյուններին կից գտնվող ՓՈԳ-երի ընդհանուր ժողովների վորոշմամբ՝ ցեխերում կամ առանձին ձեռնարկներում կարող են կազմակերպվել ֆիլիալներ, վորոնք գործում են հատուկ կանոնադրության հիման վրա: Ֆիլիալները իրենց ամբողջ աշխատանքի ընթացքում հաշվետու են դրամարկղի գլխավոր որգաններին առաջ (խորհուրդ, վարչություն, ընդհանուր ժողով) և աշխատում են վերջիններիի հրահանգներով: Ֆիլիալ ունեցող ցեխի կամ ձեռնարկության դրամարկղի մասնակիցների ընդհանուր ժողովը ընտրում է Ֆիլիալի բյուրո՝ 3—4 հոգու կազմով, վորոնք կիրառում են կյանքում դրամարկղի խորհրդի, վարչության և ձեռնարկության, կամ ցեխի դրամարկղի անդամների ընդհանուր ժողովի գիրեկտիվները: Ֆիլիալի բյուրոյի ֆունկցիաների մեջ մտնում է՝ ա) մասնակցողների դիմումները նախապես քննել, նրանց մասին յեզրակա-

ցությունները տալ և գիմումներին վերջնական լուծում տալու համար գրամարկղի վարչության ներկայացնել, բ) մասնակիցներին փոխատվություն տալ և գրամարկղի վարչության հանձնարարությամբ այդպիսին հետ գանձել, գ) գրամարկղի անդամներին անդամավճարներ գանձել, դ) վարչության բոլոր հանձնարարությունները կատարել:

ՅԵ. ԳՐԱՄԱՐԿՂԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

25. Գրամարկղի միջոցները կազմում են.—

ա) մինչև սույն կանոնադրության ընդունվելը, նախորդ գրամարկղում մնացած միջոցները,

բ) մուտքի և անդամական վճարները,

գ) գրամարկղի տոկոսները և գրամարկղի մասնակիցների՝ ժամանակին իրենց պարտքը չհատցնելու պատճառով մուծած տուգանքները,

դ) այլ պատահական միջոցներ (գա-

սախոսությունների, համերգների, չպահանջված մուծումները և այլն)։

26. ՓՈԴ-ից դուրս գալու դեպքում՝ մասնակցողին վերադարձվում են անդամական վճարները փոշ պակաս քան նրա կողմից մուծած անդամական վճարները . . . %-ը։ Վերադարձնելի անդամավճարների չափը սահմանում է դրամարկղի անդամների ընդհանուր ժողովը (կոնֆերանսը)։ Մուտքի վճարը վերադարձման յենթակա չէ։

ԾԱՆՈԹՈՒԹ. ա) Այն անդամավճարները, որ անդամը մուծել է մինչև դրամարկղի վերակազմությունը, կամ մինչև սույն կանոնադրության ընդունվելը, վերադարձման յենթակա չեն և հատկացվում են դրամարկղի ֆոնդերը և դրամագլուխն ուժեղացնելու՝ ընդհանուր ժողովի (կոնֆերանսի) հայտարարության համաձայն։

բ) Դրամարկղի անդամությունից հեռացվողներին անդամավճարները վերադարձվում են ընդհանուր հիմունքներով։

գ) Դրամարկղի անդամի մահվան դեպքում

անդամական վճարները տալիս են նրա ժառանգներին։

դ) Այն գումարները, որոնք մեկ տարվա ընթացքում հետ չեն պահանջվում այս կամ այն պատճառով՝ դրամարկղից դուրս մնացած անդամների կողմից, դառնում են դրամարկղի սեփականություն և ոգտագործվում են ընդհանուր ժողովի (կոնֆերանսի) հայեցողությամբ։

27. Դրամարկղին պարտք ունեցող անդամի հեռանալու դեպքում՝ նրան վերադարձնելի անդամավճարներից դրամարկղի բյուրոն իրավունք ունի պահել համապատասխան գումար՝ պարտքը հանդցնելու համար։

28. Դրամարկղի անդամները մի այլ ձեռնարկություն կամ մի քաղաքից մի այլ քաղաք տեղափոխվելու դեպքում՝ ընդունվում են աշխատանքի նոր վայրի դրամարկղի անդամ։ Նոր դրամարկղի անդամ են դառնում առանց մուտքի վճար մուծելու և առաջի կարգնելու միայն այն դեպքում, յերբ նոր ընդունվող անդամը տվյալ դրամարկղը մու-

ծի լրիվ այն անդամամվճարները, վոր նա հետ է ստացել նախորդ դրամարկղից դուրս դալու ժամանակ։ Հակառակ դեպքում նա համարվում է վորպես նոր ընդունվող՝ սրանից բղխող բոլոր հետևանքներով, այսինքն՝ կորցնում է իր ստաժը և մուծում է մուտքի վճար։

29. Այն անդամավճարները, վոր անդամը հետ է ստանում մի դրամարկղից դուրս դալու դեպքում և մուծում է նոր դրամարկղը, յենթակա յեն լրիվ կերպով վերադարձման՝ այս դրամարկղից դուրս դալու կամ մի այլ դրամարկղ անցնելու դեպքում և չեն կարող ծառայել դրամարկղի վնասները ծածկելու դործին։

30. Դրամարկղի միջոցները ծախսվում են բյուրոյի կարդադրությամբ՝ ընդհանուր ժողովի (կոնֆերանսի) կամ դրամարկղի խորհրդի սահմանած կարդով և պահվում են պետական կամ

կոոպերատիվ վարկային հիմնարկներում։

ԾԱՆՈԹՈՒԹ.—ՓՈԴ-ԷՆ իրավունք ունեն բաց անել իրենց անուններով ընթացիկ հաշիվներ պետական, կոոպերատիվ և վարկային հիմնարկներում։

31. Դրամարկղի միջոցները բաժանվում են հետևյալ կերպով.—

ա) Պահեստի դրամապրոխ (մուծվող բոլոր գումարների 10%-ը և մուտքի ամբողջ վճարները) և բ) շրջանառու դրամապրոխ։ Շրջանառու դրամապրոխի 5—10% կարելի է ուղղ անվերադարձ նպաստներ, 10—15-ից վոչ ավելի՝ կազմակերպական ծախսերի համար, իսկ մնացած միջոցները հատկացվում են վերադարձելի նպաստների և փոխառությունների համար։ (Տոկոսի չափերը որոշակի են)։

ԾԱՆՈԹՈՒԹ Դրամարկղի մասնակիցների ընդհանուր ժողովի (կոնֆերանսի) վորոշմամբ կարող են կազմվել դրամարկղի իսկ միջոցներից հատուկ նպաստակ ունեցող ֆոնդեր։

32. Պահեստի դրամագլուխը հատկացվում և լրացնելու ֆոնդերը և չբաշխված դրամագլուխը և ծածկելու ՓՈԴ-երի հնարավոր վնասները և կարող և ծախսվել դրամարկղի անդամների ընդհանուր ժողովի (կոնֆերանսի) հատուկ վորոշմամբ միայն:

33. Դրամարկղի անդամների մուտքի վճարը սահմանվում և ամսական աշխատավարձի 1%-ից վոչ ավելի: Անդամական վճարների ամսական չափը սահմանում և դրամարկղի անդամների ընդհանուր ժողովը աշխատավարձի 1% սահմաններում: Աշխատավարձի 1%-ի սահմաններում անդամական վճարների ամսական չափը կարող և հաստատվել ընդհանուր ժողովների կողմից հաստատած ամուր կատեգորիային գրքույկներում, համաձայն աշխատավարձի:

ԾԱՆՈԹՈՒԹ.—ա) Գործարարներն ազատվում են անդամական վճարներ մուծելուց, եթե նրանք ռեգիստրացիայի են

յենթարկվում դրամարկղում, վորպես գործադուրկներ, վոչ պակաս, քան 3 ամիսը մեկ անգամ։

բ) Դրամարկղի այն անդամները, վորոնք աշխատանքից ազատվում են հիվանդության պատճառով, հիվանդության ամբողջ ընթացքում ազատվում են անդամական մուծումներ վճարելուց։

34· Անդամական վճարների դանձումը կատարվում է անհատական կարգով, հատուկ վճարահավաքների կամ անմիջական դրամարկղի ապպարատի միջոցով։

Զ· ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՑԵՎ ՆՊԱՍՏՆԵՐ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ

35· Փոխատվություններ տրվում են վոչ շուտ, քան դրամարկղը մտնելուց 4 ամիս հետո, իսկ անվերադարձ նպաստներ՝ վոչ շուտ, քան 6 ամիս հետո։ Ժամկետի սահմանը և փոխատվությունների չափը սահմանում է դրամարկղի ընդհանուր ժողովը (կոնֆերանսը), համաձայն դրամարկղի ֆի-

նանական դրության և փոխադրության ստանալու համար դիմող անդամների վճարունակության ու կրեդիտի։

36. Այն դեպքում, երբ դրամարկղում մնում և շրջանառու կապիտալի 15—20%-ից քիչ կանխիկ դրամ, ընդհանուր ժողովը կարող է՝ շրջանառու դրամագլխի միջոցներն ավելացնելու նպատակով, ժամանակավորապես, 2 ամսից վոչ ավելի ժամանակով, դադարեցնել փոխառությունների և նպաստների բաշխումը։

37. Անվերադարձ նպաստները կարող են տալվել՝ դրամարկղի անդամներին հրդեհի, կողոպուտի դեպքերում, երբ անդամի ստացուածքին բուրջ նյութական վնաս և հասել. դրամարկղի անդամի ընտանիքի անդամներին՝ անդամի մահվան դեպքում, և սուր կրիզի այլ բացառիկ մոմենտներում։ Կարիքի առանձին տեսակների նպաստի չափը վորոշում և դրամարկղի անդամ-

ների ընդհանուր ժողովը (կոնֆերանսը)։

ԾԱՆՈԹՈՒԹ. — Դրամարկղի ընդհանուր ժողովի (կոնֆերանսի) վերոշման համաձայն՝ անվերադարձ նպաստներ տալը կարող է ընդհատվել վերոշ կամ անորոշ ժամանակով։ Այդպիսի դեպքերում անվերադարձ նպաստների համար նշանակված միջոցները ոգտագործվում են փոխառություններ տալու համար։

38. Փոխառությունների ու նպաստների համար տրված դիմումները պետք է քննվեն վարչության կողմից՝ դիմումներ տալու օրից վոչ ուշ, քան մեկ շաբաթվա ընթացքում։ Փոխառությունների և նպաստների բաշխումը պետք է կատարվի վարչության վերջումը կալանարուց մեկ օրից վոչ ուշ։

39. Փոխառությունները պետք է վերադարձվեն պարտապանների կողմից անմիջապես դրամարկղը՝ սահմանած ժամանակում։ Զարդեղեն շվճարողների վերաբերյալ՝ դրամարկղի վարչությունն իրավունք ունի ձեռք

ունել ծայրահեղ միջոցները, մինչև իսկ դատական կարգով գանձելը։

40. Նպատակ ունենալով սահմանված ժամանակում ունեցած պարտքերի լիկվիդացիայի համար նյութական շահագրգռություն ստեղծել, թույլատրվում է տվյալ գրամարկղի մասնակցողների ընդհանուր ժողովի (կոնֆերանսի) վարչմամբ, վերցնել անկանոն վճարողներից տուգանք՝ վճարման յենթակա գումարի տասական 1 տոկոսից վոչ ավելի։

Ե. ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

41. Գրամարկղի բոլոր ընթացիկ աշխատանքները տանում են գրամարկղի վարչության անդամները։ Գրամարկղի վարչության հատուկ վարչմամբ, ընդհանուր ժողովի (կոնֆերանսի) կամ գրամարկղի խորհրդի հատատեսության հետ, կարելի է թույլատրել ընտրված անդամներից գրամարկղի հաշվին վր-

ձարոմի աշխատակիցներ ունենալ, ինչպես և վարձու աշխատակիցներ:

42. Դրամարկղի գործավարությունը, հաշվետարությունը և հաշվեվարությունը տարվում են համապատասխան մթության վարչության սահմանած ձևերով:

43. Դրամարկղի վարչությունը պարբերաբար, սահմանած ժամանակում, ներկայացնում է ի տեղեկություն համապատասխան գործադրողին կամ մթության վարչության իր գործունեության և ֆինանսական աշխատանքների մասին յեղած հաշվետվությունները, նույնպես և վերատուգիչ հանձնաժողովի արձանագրությունները:

Ը. ԴՐԱՄԱՐԿՂԻ ԳՈՐԾԵՐԻ ՎԵՐԱՏՈՒԳՈՒՄԸ

44. Դրամարկղի գործերն ատուգելու համար դրամարկղի ընդհանուր ժողովն (կոնֆերանսը) ընտրում է՝ դրամարկղի վարչության ընտրության ժամա-

նակամիջոցին հավասար ժամանակով վերատուպիչ հանձնաժողով՝ 3—5 անդամի և 2 փոխ-անդամի կազմով:

45. Վերատուպիչ հանձնաժողովի պարտականությունների մեջն են մտնում.—

ա) դրամարկղի բոլոր գործերի և դրամարկղի վարչության և խորհրդի գործունեության մանրամասն քննությունը՝ կանոնավորության և ընդհանուր ժողովների վորոշումների համաձայն, վոչ պակաս քան 3 ամիսը մեկ անգամ,

բ) յուրաքանչյուր ամիս դրամարկղի կանխիկ միջոցների և դրամական փաստաթղթերի ստուգումը,

գ) դրամարկղի նախահաշվի մասին ցեղրակացություն տալը և հաշվեհավասարությունների հաստատելը:

Վերատուպման արդյունքների մասին վերատուպիչ հանձնաժողովը զեկուցում է դրամարկղի անդամների ընդհանուր ժողովում (կոնֆերանսում)

և տեղեկացնում է դրամատիրոջի խորհրդին, վարչությանը, գործադրությունին և միության վարչությանը:

Թ. ԴՐԱՄԱՏԻՐՈՋԻ ԼԻԿՎԻԴԱՑԻԱՆ

46. Դրամատիրոջի լիկվիդացիան կատարվում է ընդհանուր ժողովին (կոնֆերանսի) մասնակցողների ձայների առնվազն $^2/_3$-ի մեծամասնությամբ ընդունված վորոշմամբ՝ հետևյալ դեպքերում. յերբ՝

ա) դրամատիրոջը բավականաչափ անդամներ չունի,

բ) բացակայում են անհրաժեշտ միջոցները և հնարավորություն չկա այդպիսիք ձեռք բերելու,

գ) դրամատիրոջը ձուլվում է այլ դրամատիրոջի հետ:

Վերջին դեպքում նրա միջոցները անցնում են միացյալ դրամատիրոջին:

47. Դրամատիրոջի լիկվիդացիայի համար դրամատիրոջի ընդհանուր ժողովում (կոնֆերանսում) ընտրվում է լիկվի-

գացիոն հանձնաժողով։ Լիկվիդացիոն հանձնաժողովի պարտականությունները կարելի է դնել դրամարկղի վարչության վրա։ Դրամարկղի լիկվիդացիան կատարվում և յերկու ամսվա ժամանակամիջոցում, վոր ընթացքում դրամարկղի անդամների պարտքերը պետք է լիկվիդացիայի յենթարկվեն և դրամարկղի բոլոր առձեռն միջոցները պարզվեն։

ԾԱՆՈԹՈՒԹ. — Լիկվիդացիայի ընթացքում անդամական վճարներ ընդունելու և փոխառություններ ու նպաստներ տալու բոլոր գործառնությունները դադարեցվում են։

48. Դրամարկղի լիկվիդացիայի մոմենտից մնացած առձեռն միջոցները ոգտագործվում են դրամարկղի անդամների ընդհանուր ժողովի (կոնֆերանսի) կողմից սահմանված կարգով, համաձայնության գալով այդ մասին միության վարչության հետ։

ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՓՈԽԱԴԱՐՁ ՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՐԿՂԻ ՄԱՍԻՆ

Խ.Ս.Հ.Մ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԳԻՐ ԿՈՄԻՏԵԻՆ ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Խ.Ս.Հ.Մ. Կենտրոնական Գործադիր Կոմիտեն յեվ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը

ՎՈՐՈՇՈՒՄ ԵՆ՝

1. *Աշխատավորական փոխադարձ ուղնության դրամարկղները, վորոնց նպատակն և իրենց անդամներին ընկերական նյութական ուղնություն հասցնել, կազմակերպվում են Պրոֆմիությունների Համամիութենական Կենտրոնական Խորհրդի կողմից հաստատ-*

ված փոխադարձ ողնության դրամարկղի կանոնների հիմունքներով և գործում են համաձայն կանոնադրությունների (հոդ. 2)։

2. Աշխատավորական փոխադարձ ողնության դրամարկղների կանոնադրությունները մշակվում են Պրոֆմիությունների համամիութենական Կենտրոնական Խորհրդի կողմից հրատարակված նորմալ կանոնադրության հիմունքով և հաստատվում են Պրոֆմիությունների համապատասխան մարմինների կողմից։

3. Աշխատավորական փոխադարձ ողնության դրամարկղները կարող են ապատարկել բացառապես իրենց անդամներին։

4. Աշխատավորական փոխադարձ ողնության դրամարկղները Պրոֆեսիոնալ միությունների համապատասխան մարմիններում առանձին մոմենտից, ունենալ են իրավական անձի իրավունքներով և կարող են բոլոր որի-

նական միջոցներով ձեռք բերել և տարածել ամեն տեսակի ունեցվածք, գործառնություններ կատարել, դատարանում հանդես գալ իրրև հայցվոր և պատասխանող։

5. Աշխատավորական փոխադարձ ողնության դրամարկղերն ոգտվում են պրոֆեսիոնալ միություններին արված համապետական և տեղական հարկերի ու հավաքների ամեն արտոնություններից։

6. Աշխատավորական փոխադարձ ողնության դրամարկղերի բոլոր տեսակի գործառնությունների փաստաթղթերը և աշխատավորական փոխադարձ ողնության դրամարկղերից փող ստանալու համար արված հավատարմագրերը ազատվում են դրոշմատուրքից։

Ա.Ս.Հ.Մ. Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահ՝
(ՖԵՑԶՈՒԼԼԱՀ ԽՈՋԱՅԵՎ)

Խ.Ս.Հ.Մ. ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահի տեղակալ՝
(ՅՍ. ՌՈՒԶՈՒՏԱԿ)

Խ.Ս.Հ.Մ. Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի քարտուղար՝
(Ա. ՅԵՆՈՒԿԻՁԵ)

Մոսկվա–Կրեմլ։
22 հոկտեմբերի 1926 թ.։

ՀՀ Ազգային գրադարան
NL0943159

6 280

ԳԻՆԸ 10

Ա 92

842

336.7